ՖՐԱՆՍԻԱՀԱՅ ՄԱՐԻ ԽԱՉԻԿՅԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ» ԿՅԱՆՔԻ ՍԿԻԶԲԸ

ՀՎՀ ուսանողուհի Մարի Խաչիկյանը Ֆրանսիայից

Մարի Խաչիկյանը Ֆրանսիայի հարավում գտնվող Վալանս քաղաքից է, որն աչքի է ընկնում Ֆրանսիայի տարածքում համեմատաբար մեծաթիվ հայ բնակչությամբ: Մարին աշխատում է ապահովագրական ընկերությունում, երեկոյան սովորում է Հայկական վիրտուալ համալսարանում, իսկ հանգստյան օրերին զբաղվում է համայնքային գործերով:

Մարին հայ հոր և ֆրանսիացի մոր զավակ է: Մեծանալով Ֆրանսիայում իր երկու եղբայրների՝ Գիյոմի և Մատիոյի հետ, հնարավորություն չի ունեցել հաճախել հայկական դպրոց կամ այցելել հայկական եկեղեցի: Իր արմատների մասին բոլոր տեղեկությունները ստացել է նկարներից, Հայաստանի մասին գրքերից և ֆիլմերից, որոնք իր մայրը գնում էր իր համար: Այնուամենայնիվ հետաքրքրասեր փոքրիկն ինքնուրույն սովորեց հայոց այբուբենը շատ վաղ հասակում: Նա միշտ ցանկացել է խոսել հայերեն և այցելել Հայաստան, հպարտ է եղել իր հայկական արմատներով, բայց երբեք հնարավորություն չի ունեցել ճանաչել հայկական մշակույթը:

«Երբ արդեն բավականին մեծ էի, որոշեցի կնքվել հայկական եկեղեցում, ինչն էլ շրջադարձային եղավ ինձ համար: Դա իմ «հայկական» կյանքի սկիզբն էր: Մյուս կարևոր շրջադարձը «Մխիթար-Հայաստան կապ» կազմակերպության հայտնաբերումն էր: Վերջինիս մասին տեղեկացա մի հայ ընկերոջ շնորհիվ ու սկսեցի ակտիվ գործունեություն ծավալել՝ ժամանակիս մեծ մասը նվիրաբերելով կազմակերպությանը: Կազմակերպում էի կոնֆերանսներ, ցուցահանդեսներ, Հայաստան ուղարկում բարեգործական խմբեր: Ինքս առաջին անգամ Հայաստան այցելեցի 2008թ.-ին, որից հետո առիթ ունեցա ևս մի քանի անգամ լինել հայրենիքում: Իսկ 2011-ին խնդրեցի ծնողներիս, որպեսզի ընտանիքով այցելենք Հայաստան և Արցախ:

Երկար ժամանակ հայերենի ուսուցիչ գտնելու փնտրտուքների մեջ էի, երբ Փարիզի ընկերներիցս մեկը պատմեց Հայկական վիրտուալ համալսարանի մասին: Անմիջապես մուտք գործեցի կայք և գրանցվեցի հայերենի դասընթացին: Հայերեն սովորելու իմ վաղեմի երազանքը կարծես թե իրականություն էր դառնում: Ինձ համար շատ կարևոր էր սովորել հայերեն, որովհետև այն հայկական ինքնության կարևորագույն խորհրդանիշն է: Այսպիսով, վերջապես գտա հայերեն սովորելու իմ ուղին: Ես հայերենի իմ առաջին դասընթացին գրանցվեցի 2010թ. սեպտեմբերին և մեծ ոգևորությամբ սկսեցի շատ արագ սովորել: Սովորեցի ավելի քան 500 բառ, ինչի օգնությամբ էլ շատ կարճ ժամանակահատվածում արդեն կարողանում էի կազմել ամենից կարևոր արտահայտությունները և նախադասությունները: Ուսուցիչները բարձր գնահատեցին հայերեն սովորելու իմ մեծ կամքն ու վճռականությունը: Ես չեմ կրթվել հայկական մշակույթի մեջ և նույնիսկ հայկական արտաքին չունեմ, բայց հայոց լեզուն սովորելը կլինի իմ արմատներին մերձենալու իմ ուղին»:

Մարին հավատարիմ է իր սկզբունքներին, հավատում է, որ միշտ կարող է գտնել ճանապարհ իր նպատակներին հասնելու համար, սիրում և գնահատում է իր մշակույթն ու արմատները, ինչն էլ, ի վերջո, նրան ուժ և վճռականություն է տալիս հաղթահարելու բոլոր արգելքներն ու դժվարությունները: Հայկական վիրտուալ համալսարանն իրեն տվեց հայկական մշակույթին մոտ լինելու, ինչպես նաև հայոց լեզուն սովորելու այդ մեծ հնարավորությունը:

«ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՊԱՏԿԵՐԱԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Դեթրոյտի «Ալեք և Մարի Մանուկյան» թանգարանի նախաձեռնությամբ և ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ, սեպտեմբերի 19-ին, Հայաստանի ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում տեղի ունեցավ Դեթրոյտի «Ալեք և Մարի Մանուկյան» թանգարանի ցուցանմուշները ներկայացնող «Հայկական գանձերի ժառանգություն. վկայություն մի ժողովրդի» (A Legacy of Armenian Treasures: Testimony to a People) պատկերագրքի շնորհանդեսը:



Շնորհանդեսին մասնակցեցին «Ալեք և Մարի Մանուկյան» թանգարանի հոգաբարձուների խորհրդի անդամ և գրքի գլխավոր խմբագիր Երվանդ Ազատյանը, թանգարանի համակարգող Լյուսի Արտաշը, պատկերագրքի հրատարակիչ Ալիս Նիկողոսյանը և այլք: Կոթողային այս հրատարակության մասին խոսեցին պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Երվանդ Ազատյանը, իսկ թանգարանի մասին պատմող պատկերագիրք-ալբոմը ներկայացրեց արվեստաբան Լևոն Չուքասզյանը:

Դեթրոյտի «Ալեք և Մարի Մանուկյան» թանգարանը հիմնվել է 1992-ին, որտեղ ցուցադրվում են հայկական արվեստի հարուստ և եզակի շուրջ 1500 ցուցանմուշներ: Հայաստանի Ազգային հերոս, ազգային մեծանուն բարերար և ՀԲԸՄ-ի ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանի և նրա տիկնոջ անունը կրող թանգարանը համարվում է հայ արվեստի ամենախոշոր կենտրոնը Հայաստանից դուրս: